Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Դատավորների նկատմամբ կարգապահական վարույթի նյութերի նախապատրաստման բաժնի 2011-2012թթ.

*1. 12.06.2011թ. մինչև 12.06.2012թ. ընկած ժամանակահատվածում Դատավորների նկատմամբ կարգապահական վարույթի նյութերի նախապատրաստման բաժին ստացվել է **477** դիմում-բողոք, որոնցից*

*1.1 **153** դիմումով խնդրել են միաջամտել դատարանի գործունեությանը կամ վերանայել դատական ակտերը,*

*1.2 **161** դիմում վերաբերվել են այլ պահանջների, այդ թվում ՀՀ արդարադատության նախարարի իրավասություններից դուրս,*

*1.3 **149** դիմումներ վերաբերվել են դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելուն, որոնցից*

*1.3.1 **106** դիմում չի պարունակել օրենքի խախտման վերաբերյալ առերևույթ հիմքեր / ՀՀ դատական օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետեր/,*

*1.3.2 **21** դիմումով բացակայել է կարգապահական վարույթ հարուցելու պայմանը / ՀՀ դատական օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետեր/,*

*1.3.3 **22** դիմումով կազմվել են կարգապահական խախտման վերաբերյալ տեղեկանքներ, որոնցից*

*1.3.3.1 **13** տեղեկանքով ներկայացված խախտումները ՀՀ արդարադատության նախարարի կողմից չեն գնահատվել, որպես ակնհայտ և կոպիտ,*

*1.3.3.2 **9**-ով հարուցվել է կարգապահական վարույթ, որոնցից **3** դատավորի նկատմամբ հարուցված վարույթները ՀՀ արդարադատության նախարարի կողմից կարճվել են, իսկ **6** վարույթներ գտնվում են ընթացքի մեջ:*

2. Նշված ժամանակահատվածում հարուցված 2 վարույթներով դատավոր Ա.Հովսեփյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության իսկ դատավոր

Ա.Օհանյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ՀՀ Արդարադատության խորհրդի կողմից կարճվել է:

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Նոտարիատի և ՔԿԱԳ մարմինների գործունեության օրինականության վերահսկողության բաժնի կողմից 2011-2012թթ. կատարված տարեկան աշխատանքների վերաբերյալ

Նոտարիատի և ՔԿԱԳ մարմինների գործունեության օրինականության վերահսկողության բաժինը որպես ՀՀ ԱՆ աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչության կառուցվածքային ստորաբաժանում, իրականացրել է գործունեություն՝ ուղղված նոտարիատի և քաղաքացիական կացության ակտերի գրանցման ոլորտներում բարեփոխումների և օրինականության ամրապնդմանը:

Նշված խնդրի իրականացման նպատակով, բաժինը 2011-2012թթ. կատարել է հետևյալ աշխատանքները.

1. կատարվել են վերլուծություններ՝ հիմնվելով քաղաքացիների կողմից ստացված դիմում-բողոքների, տեսչության աշխատակիցների անձնական դիտարկումների և հասարակական կազմակերպությունների կողմից արված վիճակագրությունների հիման վրա:

Վերլուծությունների հիման վրա, առանձնացվել են այն խախտումները, որոնք առավել հաճախ են հանդիպում նոտարների և ՔԿԱԳ մարմինների գործունեության մեջ և կոնկրետ քայլեր են ձեռնարկվել դրանք վերացնելու ուղղությամբ:

Մասնավորապես, նոտարների գործունեության հետ կապված առավել հաճախ բողոքներ են եղել՝ կապված հաճախորդներից օրենսդրությամբ սահմանված սակագների չափը գերազանցող գումարների գանձման հետ: Նշված երևույթը բացառելու նպատակով, հանձնարարական է ուղղվել նոտարներին՝ ապահովել գանձվող գումարների վերաբերյալ հաճախորդների իրազեկումը՝ իրենց գրասենյակներում համապատասխան ցուցատախտակներ փակցնելու միջոցով: Ի շնորհիվ տեսչության պետի և բաժնի աշխատակիցների կողմից իրականացված հետևողական ստուգումների, նշված խնդիրը ներկայումս լուծված է:

Քաղաքացիների կողմից բազմաթիվ դժգոհություններ են արտահայտվել նաև նոտարական գործողությունների հետ կապված պետական տուրքերի և ծառայությունների վճարների գանձման մեխանիզմի շուրջ: Մասնավորապես, նշված վճարները կատարելու համար քաղաքացիները ստիպված գնում էին բանկ, ինչը հերթերի, ժամանակի և գումարների կորուստ էր առաջացնում: Նշված խնդիրը լուծելու նպատակով, բաժինը հետևողական քայլեր է ձեռնարկել նոտարների կողմից “Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին” ՀՀ օրենքի պահանջների կատարումն ապահովելու ուղղությամբ, որի շնորհիվ քաղաքացին հնարավորություն է ստացել կանխիկ վճարել ինչպես իրեն մատուցվող ծառայությունների արժեքը, այնպես էլ օրենքով սահմանված պետական տուրքի գումարները: Քաղաքացիների բողոքների հիման վրա, ստուգայց է կատարվել “Արաբկիր” նոտարական տարածքի նոտարական գրասենյակներ, որի ընթացքում արձանագրվել են խախտումներ: Հաշվի առնելով նոտարների պատրաստակամությունը՝ ուղղված իրենց կողմից թույլ տրված խախտումը վերացնելուն, նրանց հետ տարվել են բացատրական աշխատանքներ և տրվել է բանավոր նկատողություն:

- Բաժինը գրեթե ամեն օր իրականացնում է քաղաքացիների ընդունելություն, որոնց կողմից խախտումների վերաբերյալ հայտարարություն լինելու դեպքում կազմվում է արձանագրություն և միջոցներ են ձեռնարկվում խախտումների առկայությունը և դրանց բնույթը պարզելու ուղղությամբ:

- Բաժնի կողմից մանրակրկիտ ուսումնասիրվում են բոլոր դիմումները և բողոքներն ու առաջարկությունները: Բաժնի կողմից քննարկվել են շուրջ 300 դիմումներ և բողոքներ:

Քաղաքացիների կողմից ներկայացված բողոքների հիման վրա յոթ նոտարների նկատմամբ հարուցվել են կարգապահական վարույթներ, որոնց արդյունքում վերջիններս ենթարկվել են կարգապահական պատասխանատվության: Տրված տույժերը պայմանավորված են եղել ինչպես օրենքի պահանջների, այնպես էլ նոտարական էթիկայի պահանջների խախտմամբ:

Մասնավորապես, կարգապահական տույժի են ենթարկվել՝

1. «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Ալվարդ Մելքոնյանը,
2. «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյանը,
3. «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Աշխեն Հարությունյանը,
4. «Շենգավիթ» նոտարական տարածքի նոտար Սվետա Բադիրյանը,
5. «Էրեբունի» նոտարական տարածքի նոտար Սամվել Մաժինյանը,
6. «Արաբկիր» նոտարական տարածքի նոտար Վերա Աբաջյանը,
7. «Վանաձոր» նոտարական տարածքի նոտար Արուսյակ Ազարյանը:

Քաղաքացիների բողոքների հիման վրա կայացվել են վարչական ակտեր, որոնց հիման վրա ՔԿԱԳ տարածքային մարմինները կատարել են քաղաքացիների կողմից պահանջվող քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումները: Մասնավորապես, խոսքը վերաբերվում է՝

1. ՔԿԱԳ Կենտրոն տարածքային մարմնին,
2. ՔԿԱԳ Վանաձոր տարածքային մարմնին,
3. ՔԿԱԳ Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն տարածքային մարմնին:

Ավարտվել է 2011թ. սկսված «Մարտունի» նոտարական տարածքի նոտար Ս. Մելքոնյանի նոտարական գործերի ստուգումը: Ստուգման արդյունքում ՀՀ արդարադատության նախարարի 09.01.2012թ. թիվ 1-Ա հրամանով նոտար Ս. Մելքոնյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ: Վարույթի արդյունքում

«Մարտունի» նոտարական տարածքի նոտար Ս. Մելքոնյանի նկատմամբ որպես կարգապահական տույժ կիրառվել է խիստ նկատողություն:

3. 10.05.2012թ. ավարտվել է 2011թ. սկսված «Սևան» նոտարական տարածքի նոտար Արմեն Հարությունյանի կողմից կատարված նոտարական գործողությունների ստուգումը, որի արդյունքում ՀՀ արդարադատության նախարարի 01.06.2012թ. թիվ 86-Ա հրամանով նոտարի նկատմամբ հարուցվել և իրականացվում է կարգապահական վարույթ:

4. ՀՀ արդարադատության նախարարի 15.05.2012թ. թիվ 74-Ա հրամանով ստուգում է իրականացվում «Հրազդան» նոտարական տարածքի նոտար Հայկուշ Գյոզալյանի կողմից կատարված նոտարական գործողությունների օրինականության վերաբերյալ:

5. ՀՀ արդարադատության նախարարի 13.04.2012թ. թիվ 55-Ա հրամանով ստուգում է անցակացվել ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի ՔԿԱԳ գործակալության Երևանի հատուկ սպասարկում տարածքային բաժնում: Ստուգման արդյունքում հայտնաբերված խախտումների վերաբերյալ ներկայացվել է տեղեկանք, որի հիման վրա ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի ղեկավար Ն. Խաչատրյանի 16.05.2012թ. թիվ 97-Ա հրամանով ՔԿԱԳ Երևանի հատուկ սպասարկում տարածքային բաժնի պետ Ռուզաննա Միրզոյանի նկատամամբ որպես կարգապահական տույժ կիրառվել է նկատողություն:

Թեժ գծով ստացված բողոքի հիման վրա նյութեր են նախապատրաստվում՝ ուղղված ՔԿԱԳ Աջափնյակ-Դավիթաշեն տարածքային մարմնի ղեկավար Անահիտ Ղուկասյանի և աշխատակից Սուսաննա Ապիյանի նկատմամբ կարգապահական պատասխանատվություն կիրառելուն:

- Միաժամանակ, բաժինը աշխատանքներ է իրականացնում այն խնդիրները հայտ բերելու ուղղությամբ, որոնք ծագում են օրենսդրության մեջ առկա հակասությունների և բացերի հետևանքով՝ նշված գործընթացին ակտիվորեն ներգրավելով նոտարական պալատի անդամներին: Ներկայումս նախապատրաստվում են առա-

ջարկություններ՝ “Նոտարիատի մասին” օրենքում նախատեսվող փոփոխությունների վերաբերյալ:

- Նոտարների գործունեության նկատմամբ վերահսկողությունը առավել լիարժեք ապահովելու նպատակով գրություն է ուղղվել ՀՀ դատական դեպարտամենտ՝ նոտարների հետ կապված դատական գործերի վերաբերյալ նախարարությանը ծանուցելու դատարանների պարտականության կատարումն ապահովելու պահանջով:

- Կատարվել են այցելություններ ՀՀ տարբեր մարզեր, ժողովրդի հետ անմիջական շփման միջոցով առկա խնդիրները պարզելու, ինչպես նաև կատարված բարեփոխումները հասարակությանը ներկայացնելու և քննարկելու նպատակով:

- Բաժինն ակտիվ աշխատանքներ է կատարել նոտարական պալատի գործունեությունը բարելավելու և ակտիվացնելու ուղղությամբ: Մասնավորապես, նոտարական պալատին հանձնարարական է տրվել ամփոփելու նոտարների գործունեության արդյունքները, նախարարությանը ներկայացնել առաջարկություններ նոտարների գործունեությանն առնչվող օրենքներում և այլ իրավական ակտերում առկա խնդիրների վերաբերյալ:

- Բաժնի կողմից աշխատանքներ են կատարվել ժառանգական գործերի հաշվառման էլեկտրոնային ծրագրի ներդրման ուղղությամբ, որը արդեն իսկ գործում է և ապահովում է ժառանգական գործերի իրականացման արդյունավետությունը: Միաժամանակ, որպես առաջնային խնդիր, աշխատանքներ են տարվում կտակների միասնական տեղեկատվական բանկի ստեղծման ուղղությամբ, ինչը հնարավորություն կտա հեշտացնել քաղաքացիներին տեղեկատվության տրամադրումը և ժառանգական գործերի վարումը:

Նույնաբնույթ միջոցառումներ են նախատեսվում իրականացնել նաև քաղաքացիական կացության ակտերի գրանցման ոլորտում: Նշված ոլորտում իրականացվող գործունեության վերահսկման նպատակով իրականացվում է վիճակագրություն, ինչպես նաև նախատեսվում են պլանային ստուգումներ:

25.10.2011թ.-26.10.2011թ. կատարվել են ստուգայցեր Սյունիքի մարզի ՔԿԱԳ տարածքային բաժիններ:

Գրություն է ուղարկվել ՔԿԱԳ տարածքային բոլոր բաժիններին՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման ժամանակ ի հայտ եկած օրենսդրական խնդիրները ներկայացնելու նպատակով, որոնց հիման վրա կանցկացվեն համապատասխան սեմինարներ:

ՀՀ ԱՆ աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչության իրավաբանական անձանց պետական ռեսգիտրի և ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

09.01.2012 - 11.06.2012թթ. ընկած ժամանակահատվածի համար

ՀՀ ԱՆ աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչության իրավաբանական անձանց պետական ռեսգիտրի և ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության օրինականության վերահսկողության բաժնի կողմից կատարվող աշխատանքները բաժանվել են երեք խմբի.

1. Իրավաբանական անձանց պետական գրանցման գործակալության գործունեության օրինականության վերահսկողություն:
2. Ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության օրինականության վերահսկողություն:
3. Չպլանավորված այլ աշխատանքներ:

2012թ. ընթացքում իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կենտրոնական մարմնի և տարածքային ստորաբաժանումների (այսուհետ՝ գործակալություն) գործողությունների օրինականության դեմ ներկայացվել է 11 դիմում-բողոք: Ներկայացված երեք դիմում-բողոքի հիման վրա օրինականության վերահսկողության տեսչության կողմից հարուցվել է վարչական վարույթ:

Որոնցից առաջինը վերաբերվել է կուսակցության ատենապետի փոփոխության գրանցմանը և բողոքի հիմքով հարուցվել է վարչական վարույթ: Բողոքը մերժվել է անհիմն լինելու պատճառով:

Երկրոդ դիմում-բողոքը վերաբերվել է գործակալության կողմից ՍՊԸ-ի կանոնադրության փոփոխության գրանցումը մերժելուն, որի հիման վրա հարուցվել է վարչական վարույթ և քննության ընթացքում պարզվել է գործողությունների օրինականությունը և կայացվել է վարչական բողոքը մերժելու մասին որոշում:

Երրորդ դիմում-բողոքը վերաբերվել է հասարակական կազմակերպության նախագահի փոփոխության գրանցմանը, որի հիման վրա հարուցվել է վարչական

վարույթ: Վարչական վարույթի քննության ընթացքում պարզվել է գործողության օրինականությունը և կայացվել է փոփոխության գրանցումը անվավեր ճանաչելու մասին որոշում:

Մնացած դիմում-բողոքները ուսումնասիրվել և տրվել է սահմանված կարգով պատասխան վարչական վարույթ հարուցելու հիմքեր չլինելու պատճառով:

2012թ. ընթացքում ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության օրինականության վերահսկողության նպատակով ստացվել է 23 դիմում-բողոք, ինչի հիման վրա հարուցվել է 6 վարչական վարույթ:

Հարուցված վարչական վարույթներից երեքը վերաբերվել է կուսակցության 1/3-ի պահանջով հրավիրված արտահերթ համագումարի անցկացման օրինականությանը: Բավարավել է բողոքները և կուսակցության 1/3-ին առաջարկվել է անվավեր ճանաչել արտահերթ համագումարը:

Հարուցված վարչական վարույթներից մեկը վերաբերվել է Հասարակական կազմակերպության կողմից քաղաքացու վերաբերյալ կեղծ տեղեկություններ տրամադրելուն և բողոքի հիման վրա հարուցվել է վարչական վարույթ, ինչպես նաև նույն վարույթի շրջանակներում ՀՀ արդարադատության նախարարի հրամանի համաձայն ՀԿ-ում անցկացվել է ստուգում և ստուգման արդյունքում կազմվել է տեղեկանք:

Հարուցված վարչական վարույթներից երկուսը վերաբերվել է միևնույն ՀԿ-ին: Առաջին բողոքը վերաբերվել է ՀԿ-ի անդամակցմանը մերժելուն և վարույթի շրջանակներում ուսումնասիրվել է գործողության օրինականությունը, սակայն բողոք ներկայացնող անձը հրաժարվել է բողոքից և վարչական վարույթը կարճվել է: Եկրորդ վարույթը վերաբերվել է ՀԿ-ի անդամությունից հեռացնելուն և վարույթի շրջանակներում ՀՀ արդարադատության նախարարի հրամանի համաձայն ՀԿ-ում անցկացվել է ստուգում և ստուգման արդյունքում կազմվել է տեղեկանք:

Մնացած դիմում-բողոքներով տրվել է պատասխան՝ վարչական վարույթ հարուցելու հիմքեր չլինելու պատճառով:

ՀՀ արդարադատության նախարարի 2011թ. դեկտեմբերի 1-ի Ն-203 հրամանի համաձայն փոփոխություն է կատարվել Ն-319 2009թ. հրամանում «Հիմնադրամների կողմից հրապարակվող և ՀՀ արդարադատության նախարարություն ներկայացվող հաշվետվության» համաձայն որի ՀՀ-ում գրանցված հիմնադրամները իրենց տարեկան գործունեության վերաբերյալ հաշվետվությունները պետք է ներկայացնեն ՀՀ ԱՆ աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչություն:

Այս պահի դրությամբ e-register.am կայքում գրանցված է 765 հիմնադրամ, որոնցից միայն 265 հիմնադրամներն են ներկայացրել հաշվետվություն ՀՀ ԱՆ աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչություն: Մնացած 500 հիմնադրամների մասով, համաձայն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի կազմվել են համապատասխան որոշումներ՝ վարչական

տույժ նշանակելու մասին և տրվել է երեսունօրյա ժամկետ հաշվետվությունները հրապարակելու համար:

2012թ. ընթացքում ստացել ենք չպլանավորված և այլ ընթացիկ աշխատանքների կազմակերպման վերաբերյալ 8 գրություն, որոնց օրենքով սահմանված կարգով տրվել է պատասխան:

Հաշվետվություն

Օրինականության վերահսկողության տեսչության բողոքների վերլուծության

բաժին

2011թ. հուլիսի 1-ից դեկտեմբերի 30-ը

Վերը նշված ժամանակահատվածում եղել է ընդամենը 617 դիմում, որից 600-ը բողոք:

Քաղաքացիների կողմից թեժ գծով ստացվել են թվով 53 հեռախոսազանգեր:

Հեռախոսազանգերի հիման վրա 34 քաղաքացիներ հրավիրվել են ընդունելության, արդյունքում բոլոր հեռախոսազանգերին տրվել են ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր պատասխաններ:

Ըստ հարցերի բնույթի

բնակարանային -56

շինարարական-5

գյուղատնտեսական- 6

կենսաթոշակ-4

առողջապահության-6

կրթական և մանկ. հիմնարկ-5

գիտության, կուլտուրա-3

ֆինանսական-50

օրենսդրական-150

աշխ.և աշխատավարձի-17

այլ հարցեր-200

սեփականաշրջորհում-115

Հաշվետվություն

Օրինականության վերահսկողության տեսչության բողոքների վերլուծության

բաժին

2012թ. հունվարի 9-ից հունիսի 13-ը

Վերը նշված ժամանակահատվածում եղել է ընդամենը 372 դիմում, որից 300-ը բողոք:

Քաղաքացիների կողմից թեժ գծով ստացվել են 367 թվով հեռախոսազանգեր:

Հեռախոսազանգերի հիման վրա 65 քաղաքացիներ հրավիրվել են ընդունելության, արդյունքում բոլոր հեռախոսազանգերին տրվել են ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր պատասխաններ:

Ըստ հարցերի բնույթի

բնակարանային -46

շինարարական-4

գյուղատնտեսական- 5

կենսաթոշակ-4

առողջապահության-5

կրթական և մանկ. հիմնարկ-4

գիտության, կուլտուրա-2

ֆինանսական-50

օրենսդրական-100

աշխ.և աշխատավարձի-18

այլ հարցեր-34

սեփականաշրջորհում-100

ԴԱՀԿ և ՔԿ ծառայության վերաբերյալ դիմումներ՝ 01.06.2011 թվականից մինչև 01.06.2012 թվականը

ԴԱՀԿ ծառայության վերաբերյալ դիմումների թիվը 272, որոնցից երկուսով կատարվել է ծառայողական քննություն, մեկով հարուցվել է վարչական վարույթ:

ՔԿ ծառայության վերաբերյալ դիմումների թիվը 236, որոնցից մեկով կատարվել է ծառայողական քննություն: